

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ. Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 75-Ա

**ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Բերդ համայնքի բնակիչների անվամբ գրանցված փոխադրամիջոցների գույքահարկի տույժերը զեղչելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի ֆիզիկական անձանց հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

3. «Արժվաբերդի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

4. Բերդ համայնքի «Արժվաբերդի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը փոփոխություններով հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

5. «Նավուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

6. «Վարագավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

7. «Զինարիի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

8. Բերդ համայնքի ենթակայության մանկապարտեզների մեկ սանին հասանելիք սննդի նվազագույն չափը և տարիքային խմբերն սահմանելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

9. Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

10. Բերդ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

11. Բերդ համայնքի տարածքում 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ըստ գոտիավորման հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

12. Բերդ համայնքի 2019թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Սարգսյան/

13. Բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերից 552.3 ք.մ մակերեսով 11-014-0436-0041 ծածկագրով հողամասն աճուրդով օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

14. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող օժանդակ շինությունը հողամասով Հայկ Բարիսի Թաղևոսյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

15. Բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասերից 600 ք.մ մակերեսով 11-061-0051-0046 ծածկագրով հողամասն աճուրդով օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

16. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող օժանդակ շինությունը հողամասով Վարդան Ալեքսանի Նազինյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

17. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող օժանդակ շինությունը հողամասով Գոհար Հովսեփի Մելիքյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

18. Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր բնակավայրի հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

19. Գյուղատնտեսական 11-002-338-050 ծածկագրով վարելահողը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

20. Բերդ համայնքի Արծվաբերդ բնակավայրի 2019-2023թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

21. Բերդ համայնքի Չորաթան բնակավայրի 2019-2023թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

22. Բերդ համայնքի Նավուր բնակավայրի 2019-2023թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

23. Բերդ համայնքի Նորաշեն բնակավայրի 2019-2023թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

24. Բերդ համայնքի Պառավաքար բնակավայրի 2019-2023թթ. համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Հ.Մանուչարյան/

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ


ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 76-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ԶԵՂԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղի բնակիչներ Կարեն Վարդանյանը և Ամասիա Բաբայանը, Վարազավան գյուղի բնակչուհի Ազգանուշ Ալավերդյանը, Վ.Ծաղկավան գյուղի բնակիչ Մանվել Խաչատրյանը, Բերդ քաղաքի բնակիչներ Արսեն Ներսիսյանը, Կարեն Բաբայանը, Յուրի Ղազարյանը և Խաչիկ Մելիքյանը դիմել են համայնքապետարան՝ գույքահարկի տվյալների բազայում իրեն անվամբ գրանցված փոխադրամիջոցի գույքահարկի գծով առաջացած տույժերը զեղչելու խնդրանքով: Կարեն Վարդանյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 74300 ՀՀ դրամի չափով: Ամասիա Բաբայանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 30000 ՀՀ դրամի չափով, Ազգանուշ Ալավերդյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 30800 ՀՀ դրամի չափով, Մանվել Խաչատրյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 44000 ՀՀ դրամի չափով, Արսեն Ներսիսյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 12667 ՀՀ դրամի չափով, Կարեն Բաբայանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 279000 ՀՀ դրամի չափով, Յուրի Ղազարյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 7700 ՀՀ դրամի չափով, իսկ Խաչիկ Մելիքյանը վճարել է գույքահարկի գծով առաջացած պարտքը 30662 ՀՀ դրամի չափով:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Կարեն Վարդանյանի անվամբ գրանցված SUZUKI XL-7 մակնիշի 20LU831 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 19447 ՀՀ դրամի չափով:
2. Ամասիա Բաբայանի անվամբ գրանցված UAZ3151 մակնիշի 34CV606 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 10327 ՀՀ դրամի չափով:
3. Ազգանուշ Ալավերդյանի անվամբ գրանցված ՎԱՐ-2103 մակնիշի 11LS063 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 10661 ՀՀ դրամի չափով:
4. Խաչիկ Մելիքյանի անվամբ գրանցված ՎԱՐ 21214 մակնիշի 13DD133 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 10369 ՀՀ դրամի չափով:
5. Արսեն Ներսիսյանի անվամբ գրանցված ԳԱՐ-24-01 մակնիշի 59SS556 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 6935 ՀՀ դրամի չափով:
6. Կարեն Բաբայանի անվամբ գրանցված BMW X5 4.41 մակնիշի 71C0071 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 98724 ՀՀ դրամի չափով:

7.Յուրի Ղազարյանի անվամբ գրացված ՎԱԶ-2103 մակնիշի 03LL521 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել գեղչ, առաջացած տույժի 4216 ՀՀ դրամի չափով:

8.Մանվել Խաչատրյանի անվամբ գրացված GAZ 3102-311 մակնիշի 34CN300 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել գեղչ, առաջացած տույժի 15412 ՀՀ դրամի չափով:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -1

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ


ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ համայնքի Պառավաքար գյուղի բնակիչ Սլավիկ Վազգենի Բուլղադարյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր անվամբ գրանցված 2.8643 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, քանի որ նա տեղեկացված չի եղել, առաջացած տույժերի և ապառքների մասին, հնարավորության սահմաններում վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 53583 ՀՀ դրամի չափով: Բերդ համայնքի Արծվաբերդ գյուղի բնակիչ Խանում Նիկայի Բեգյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր անվամբ գրանցված 1.125 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, քանի որ նա հնարավորության սահմաններում վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 13024 ՀՀ դրամի չափով: Բերդ համայնքի Վարագավան գյուղի բնակիչ Զանիբեկ Սերոբի Եղիկյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր անվամբ գրանցված 1.3996 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, քանի որ նա տեղեկացված չի եղել, առաջացած տույժերի և ապառքների մասին, հնարավորության սահմաններում վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 38100 ՀՀ դրամի չափով: Վարագավան գյուղի բնակիչ Միքայել Սարգսի Ալավերդյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր հանգուցյալ հոր՝ Սարգիս Ալավերդյանի անվամբ գրանցված 1.9781 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 12200 ՀՀ դրամի չափով: Վարագավան գյուղի բնակիչ Գեղամ Ռաֆիկի Եղիկյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր և հանգուցյալ հոր՝ Ռաֆիկ Եղիկյանի անվամբ գրանցված 2.7098 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 51200 ՀՀ դրամի չափով: Վ.Ծաղկավան գյուղի բնակիչ Մարուսյա Սանթուրի Առաքելյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր անվամբ գրանցված 1.0298 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 16350 ՀՀ դրամի չափով: Վարագավան գյուղի բնակիչ Հրաչիկ Բարսեղի Եգանյանը դիմել է Բերդի համայնքապետարան՝ հողի հարկի տվյալների բազայում իր անվամբ գրանցված 3.3026 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի տույժը զեղչելու խնդրանքով, վճարել է հողի հարկի գծով առաջացած պարտքը՝ 23120 ՀՀ դրամի չափով:

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, և 8-րդ մասերի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Պառավաքար գյուղի բնակիչ Սլավիկ Վազգենի Բուլղադարյանի անվամբ գրանցված 2.8643 հա ընդհանուր մակերեսով հողատեսքերի հողի հարկի գծով կատարել զեղչ, առաջացած տույժի 51507 ՀՀ դրամի չափով:

7.Յուրի Ղազարյանի անվամբ գրացված ՎԱԶ-2103 մակնիշի 03LL521 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել գեղչ, առաջացած տույժի 4216 ՀՀ դրամի չափով:

8.Մանվել Խաչատրյանի անվամբ գրացված GAZ 3102-311 մակնիշի 34CN300 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով կատարել գեղչ, առաջացած տույժի 15412 ՀՀ դրամի չափով:

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -1

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ


ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ


ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՅՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար՝



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 78-Ա

**<<ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Արծվաբերդ գյուղի 1 փողոց, 25/1 հասցեում գտնվող վարչական շենքը՝ 625.41ք.մ ընդհանուր մակերեսով, հարթակը՝ 160.09ք.մ ընդհանուր մակերեսով, պարիսպը՝ 22.2ք.մ ընդհանուր մակերեսով և հողամասը՝ 2000ք.մ ընդհանուր մակերեսով, 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրել՝ <<Արծվաբերդի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ


ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ


ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԿԱՀՐԱՄ

[Handwritten signatures]

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒԾԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 79-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 18-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքային ենթակայության «Արծվաբերդի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը փոփոխություններով, համաձայն հավելվածի:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԻԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ


ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ



Համայնքի ղեկավար՝


ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Տպագրված է ___ օրինակ

Օրինակ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետություն
Տավուշի մարզի Բերդ համայնքի
Ավագանու 21 ղեկավարների 2018թ.
Թիվ 79-Ա որոշմամբ
Բերդ համայնքի ղեկավար
 Հարություն Մանուչարյան

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Տավուշի տարածքային բաժնի
կողմից՝ 07.04.2008թ.
գրանցման թիվ՝ 97.210.00505
վկայական՝ 03 Ա 078284
ՀՎՀՀ 07804044
07.04.2008թ. գրանցված կանոնադրություն թիվ 002.2
փոփոխությունը /նոր խմբագրությամբ/ գրանցված է
Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության աշխատակազմի իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

«ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

գ.Արծվաբերդ 2018թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.«Արժվաբերողի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, ապահովում երեխաների խնամքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
- 1.1.«Արժվաբերողի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Արժվաբերողի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը:
- 1.2 Հաստատության հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքն է /այսուհետև՝ Հիմնադիր/, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնքապետարնը:
- 1.3 Հաստատությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Արժվաբերողի գյուղապետի 14.11.2007թ. թիվ 22 և Արժվաբերողի գյուղական համայնքի ավագանու 16.11.2007թ. թիվ 22 որոշումների համաձայն Արժվաբերող գյուղի մանկապարտեզ (համայնքային) հիմնարկի (պետական գրանցման հաշվառման) թիվ 97.210.00505, վկայական՝ 03 Ա 078284) վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
- 1.4 Հաստատության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ԱՐԾՎԱԲԵՐՈՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ ԱՐԾՎԱԲԵՐՈՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ Տավուշի մարզ, Բերդ համայնք, գ. Արժվաբերող 1 փողոց, 25/1:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու փրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունն ունի իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
11. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձևավորումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով:

- ա) յրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում.
- բ) մարզաառողջարարական ծառայությունների կազմակերպում.
- գ) զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական, շտկողական ծառայությունների կազմակերպում, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզավորման հիման վրա:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատություն ընդունվում են մինչև 6.5 տարեկան երեխաները առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Հաստատությունը մանկապարտեզ տեսակի է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը:

20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

21. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

22. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության, որի կազմակերպումը ապահովում է հաստատությունը:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

23. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

24. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

25. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

26. Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

27. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

28. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

29. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

31. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

32. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ա) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,
- բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- դ) հաստատության կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատումը,
- ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը,
- զ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,
- է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

33. Բերդ համայնքի ղեկավարը իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

34. Բերդ համայնքի ղեկավարը՝

- ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ,
- գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
- դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
- ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
- զ) Բերդ համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
- է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- ը) հաստատում է հաստատության աշխատակիցների թվականակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,
- թ) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, Բերդ համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը՝

- ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
- բ) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
- գ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
- դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բերդ համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
- զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
- է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
- ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.
- թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
- ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
- ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
- ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.
- ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում, Բերդ համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)

- ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
- բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.
- գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների դրակի և արդյունքի համար.
- դ) կազմակերպում է հաստատության մեթոդկարիների աշխատանքը.
- ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն. գ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
- է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

40. Դաստիարակը՝

- ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
- բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
- գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

41. Երաժշտական ղեկավարը

- ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
- բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.

42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)

- ա) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
- բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
- գ) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
- դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

49. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, Բերդ համայնքի ղեկավարի, ավագանու որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է Բերդի համայնքապետարանը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

- ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
- բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 80-Ա

«ՆԱՎՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Նավուր գյուղի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1շենք հասցեում գտնվող վարչական շենքը՝ 625.27 ք.մ ընդհանուր մակերեսով, պարիսպը՝ 23.14ք.մ ընդհանուր մակերեսով, հարթակը՝ 130.21ք.մ ընդհանուր մակերեսով, և հողամասը՝ 2661.9ք.մ ընդհանուր մակերեսով, 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրել՝ «Նավուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ


ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 81-Ա

«ՎԱՐԱԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով












Համայնքի ավագանին որոշում է՝

Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Վարագավան գյուղի 7 փողոց, 6 փակուղի, 1 հասցեում գտնվող վարչական շենքը՝ 594.58ք.մ ընդհանուր մակերեսով, խոհանոցը՝ 56.7ք.մ ընդհանուր մակերեսով, և հողամասը՝ 1609.9ք.մ ընդհանուր մակերեսով, 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրել՝ «Վարագավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

Կողմ -13


Դեմ -0

Ձեռնպահ -0

- ԱՐԻԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ 
- ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ 
- ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ 
- ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ 
- ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ 
- ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ 
- ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ 
- ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ 
- ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ 
- ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ 
- ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ 


ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԿԱՀՐԱՄ



Համայնքի ղեկավար

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 82-Ա

**«Հինարիի ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով


Համայնքի ավագանին որոշում է՝


Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող Հինարի գյուղի 15 փողոց, 32 հասցեում գտնվող վարչական շենքը՝ 873.12ք.մ ընդհանուր մակերեսով, շվաքարանը՝ 61.05ք.մ ընդհանուր մակերեսով, և հողամասը՝ 3725.1ք.մ ընդհանուր մակերեսով, 25 տարի ժամկետով, անհատույց օգտագործման տրամադրել՝ «Հինարիի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:


Կողմ -13


Դեմ -0


Ձեռնպահ -0


ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ 


ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ 


ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ 


ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ 


ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ 


ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ 

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ 

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ 

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ 

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ 

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ 


ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ



ՍՈՒՔԻԱՅԱՆ ՎԱՀՐԱՄ



Համայնքի ղեկավար՝



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 84-Ա

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 11-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 3-րդ մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 05-Ա որոշման N 1 և 2 հավելվածները:
3. Առաջարկել Բերդ համայնքի ղեկավարին՝ Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկն հաստատելու մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
5. Սույն որոշման դրույթները տարածվում են 2019 թ. հունվարի 1-ից:

Կողմ -13

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՈՒՄ

ԱՄՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ *[Signature]*

ՂԱԿԱԼՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

ՄԱԿԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ *[Signature]*

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ *[Signature]*

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՆՈՏ *[Signature]*


ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ *[Signature]*

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ *[Signature]*

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ *[Signature]*

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ *[Signature]*

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ


Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսատնտեսագիտական բաժին
2. Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին
3. Կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին
4. Ներքին աուդիտի բաժին
5. Զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժին

Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Բերդի տարածքային բաժին

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒԹԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
 ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 95:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ <small>(սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)</small>	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԸՆԴԱՄԵՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	450000	450000
2	Վարչական ղեկավար (Այգեպար, Չինչին, Իծաքար, Վարազավան)	4	200000	800000
	Վարչական ղեկավար (Չինարի, Ն.Կ.Աղբյուր, Նավուր, Նորաշեն, Տավուշ, Վ.Կ.Աղբյուր, Պառավաքար, Վ.Ծաղկավան, Չորաթան)	9	250000	2250000
	Վարչական ղեկավար (Արծվաբերդ, Մովսեսագեղ, Այգեծոր)	3	300000	900000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	300000	300000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	250000	250000
5	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	150000	150000
6	Համայնքի ղեկավարի օգնական	1	250000	250000
ԸՆԴԱՄԵՆԸ		21	2150000	5350000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
7	Աշխատակազմի քարտուղար	1	300000	300000
Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին				
8	Բաժնի պետ	1	270000	270000
9	Գլխավոր մասնագետ	1	165000	165000
10	Առաջատար մասնագետ	1	145000	145000
11	Առաջին կարգի մասնագետ	4	100000	400000
Ֆինանսատնտեսագիտական բաժին				
12	Բաժնի պետ	1	250000	250000
13	Գլխավոր մասնագետ	1	165000	165000
14	Առաջատար մասնագետ	4	145000	580000
15	Առաջին կարգի մասնագետ	1	100000	100000
Կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժին				
16	Բաժնի պետ	1	200000	200000
17	Գլխավոր մասնագետ	1	165000	165000
18	Առաջատար մասնագետ	2	145000	290000
19	Առաջին կարգի մասնագետ	3	100000	300000
Ներքին աուղիտի բաժին				
20	Բաժնի պետ	1	200000	200000
21	Առաջատար մասնագետ	1	125000	125000
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին				
22	Բաժնի պետ	1	256624	256624

23	Առաջին կարգի մասնագետ	1	133603	133603
Զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժին				
24	Բաժնի պետ	1	200000	200000
25	Առաջին կարգի մասնագետ	8	100000	800000
Աշխատակազմ				
26	Գլխավոր մասնագետ	1	165000	165000
27	Առաջատար մասնագետ	3	145000	435000
28	Առաջին կարգի մասնագետ	17	100000	1700000
29	Երկրորդ կարգի մասնագետ	4	71428	285712
ԸՆԴԱՄԵՆԸ		60	3746655	7630939
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
30	Հավաքարար	2	71428	142856
31	Հավաքարար(քնակավայրերի)	8 (0,5)	71428	571424
32	Օպերատոր	1	90000	90000
32	Գործավար	1	90000	90000
33	Վարորդ	2	150000	300000
ԸՆԴԱՄԵՆԸ		14	472856	1194280
ԸՆԴԱՄԵՆԸ		95	6369511	14175219

Համայնքի ղեկավար



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 83-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՆԵՐԻ ՄԵԿ ՍԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՄՆՆԴԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 կետի պահանջներով և հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետը, 11-րդ հոդվածի 2-րդ կետը, 30-րդ հոդվածի 6-րդ կետը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել՝ Բերդ համայնքի ենթակայության մանկապարտեզների մեկ սանին հասանելիք սննդի նվազագույն չափը, օրական 270 դրամ:

2.Տարիքային խմբերում սահմանել երեխաների ընդգրկման հետևյալ քանակը.

- ա)մինչև 1 տարեկան -10-ից 15 երեխա,
- բ)1-ից 3 տարեկան -15-ից 20 երեխա,
- գ)3-ից 6 տարեկան -25-ից 30 երեխա,
- դ)վաղ տարիք՝մինչև 3 տարեկան,
- ե)կրտսեր նախադպրոցական՝3-ից մինչև 5 տարեկան,
- զ)ավագ նախադպրոցական՝5-ից մինչև 6 տարեկան:

3.2019թ. բյուջետային տարում պահել հետևյալ տարիքային խմբերը.

- 1)«Բերդ թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 9 խումբ,
- 2)«Բերդ թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 4 խումբ,
- 3)«Արծվաբերդի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 3 խումբ,
- 4)«Այգեպարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 1 խումբ,
- 5)«Այգեծորի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 3 խումբ,
- 6)«Մովսեսի Ժենյա Խաչատրյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 2 խումբ,
- 7)«Նավուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 2 խումբ,
- 8)«Ն. Կարմիր Աղբյուրի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 1 խումբ,
- 9)«Նորաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ թվով 3 խումբ,
